Լուիս Ֆիկօ (Պարսելոնա).- 23 տարեկան, 27 մրցում: Տկուն մարզիկ մը եւ լաւ պաշտպան մը, եթէ պէտք ըլլայ պաշտպանելու: Հակառակ իր այս առաւելութիւններուն, ան կը նախընտրէ «զգաւ ձգուիլ» աջ կողմը, առիթներ ստեղծելու եւ կոլեր նշանակելու համար: Պարսելոնայի հետ բաւական շաղութեամբ, լքելէ ետք Սփորթինկ Լիգադնը: Աշխարհի երկրասարդներու ախոյեանութիւնը շահած է 1991ին:

Վիթոր Փանէյրա (Կիսմաթա).- 30 տարեկան, 43 մրցում: Վերջերս փորձառու մարզիկ մը, որ վերջերս լաւ օրերու մէջ է, հակառակ հիմնական կազմին մէջ չըլլալով: Կրնայ վերագտնել իր դիրքը: Հետուի ուժգին եւ ճշգրիտ հարուածներու տէր:

• ՅԱՆՄԱՂԱՆՆԵՐ

Սա Փինթօ (Սփորթինկ Լիգադն).- 23 տարեկան, 9 մրցում: Խումբին ամէնէն հետաքրքրական անդամներէն մէկն է, բայց նաեւ ջղային է: Ան յաճախ հարցեր կ'ունեն-

նայ իրաւարարներուն հետ: Ծատ արագ եւ լաւ թեքըլը մարզիկ մը:

Տոմիկոս Օլիվէյրա (Փորթո).- 27 տարեկան, 28 մրցում: Եւրոպայի լաւագոյն կոլ-սքորըրներէն եւ խումբին մարզիչ Պալի Ռոպուր-նի կարծիքով, անգլիացի Ալէք Շիրքի եւ իրաքիացի Ժորժ Ռէալի մակարդակին: Փորթուգալի այժմու լաւագոյն կոլ-սքորըրը: Փորթոյի հետ 6 անգամ ախոյեան: Նի-հարակազմ եւ ոչ շատ տուկուն, բայց այս կէտերուն դիմաց ան ունի շատ լաւ թեքըր: Ծնունդով կոլ-սքորըր մը:

Ժոաօ Վիէյրա Փինթօ (Պենֆիլթա).- 24 տարեկան, 23 մրցում: Այլ բարձր թեքըրով ֆուրպոլիստ մը եւ Պենֆիլթայի կոլ-սքորըրը: Ծատ դժուար է գիմը հսկելը: Ծնած է Փորթո եւ նախապէս Պալիսթայի հետ խաղացած է եւ շահած՝ բաժակի մրցաշարքը (1992): Միակ ֆուրպոլիստը, որ 2 անգամ շահած է աշխարհի երկրասարդներու ախոյեանութիւնը (1989, 1991): Իր լաւագոյն մրցումը կատարած է Լիգադնի տերապիս Սփորթինկի դէմ (Մալիսի 1994ին), երբ նշանակեց հէթ-թիքըր մը՝ 14 վայրկեան:

Գի ընթացքին եւ տիտղոսը նուիրեց Պենֆիլթային:

Անթոնիօ Ֆոլիա (Փորթո).- 24 տարեկան, 18 մրցում: Ջախ ծայրի միջնապահ յառաջապահ մը, որ յաճախ իր ետին ապշած կը ձգէ մրցակից յետապահներ: Աշխարհի երկրասարդներու ախոյեան (1989) եւ Փորթոյի հետ ախոյեան՝ 1992ին, 1995ին եւ 1996ին:

Փետրօ Պարպոսա (Սփորթինկ Լիգադն).- 25 տարեկան, 9 մրցում: Ծատ լաւ մարզիկ մը Վիթորիա Կի-մարաշի հետ, բայց անցեալ ամառ անցնելէ ետք Լիգադն, ան դժուարութիւններու հանդիպեցաւ:

Ուիլօ Փորթիլիօ (Ուիլիս Լէյրիա).- 22 տարեկան, ոչ մէկ մրցում: Ապագայ խոստացող մարզիկ մը: Վարպետ ֆուրպոլիստ մը, որ ունի ուժգին հարուածներու կարողութիւն:

Խորխէ Քաստեթ (Սելթիս).- 27 տարեկան, 22 մրցում: Ծնունդով սոցալալիք, որ իր ասպարէզի մեծ մասը բոլորած է Սփորթինկ Լիգադնին հետ: Ան անցեալ Մարտին միացաւ Սկովտիոյ Սելթիսին եւ կը փորձէ Սկովտիոյ կեանքին համապատասխան կերպիլ:

Հաւանական կազմն է. -			
Պալա		Փ. Սանթոս	
Քոսթօ		Հելտեր	
Սեբրեթարիօ			
Փաուլօ Սոուսա		Ֆոլիա	
Ֆիկօ		Ռուի Քոսթօ	
Շոսօ Փինթօ		Տոմինկոս	



ՎԱՐԸ Է. Ս. Ը. Ս. ԼԻԲԱՆԱՆ - ԵԱՐՄՈՒԹ (Է. Ս. Ը. Ս. ՀԱԼԷՊ)

Վարդ, Մայիս 28-ի տոնակատարությունների առթիվ, փառատոնին եւ մետալներու բաշխումին առաջ, ժամը 14-30-ին, տեղի պիտի ունենայ ֆուլթայմի բարեկամական սպասուած մրցումը՝ Է. Ս. Ը. Ս. Լիբանանի ներկայացուցչական կազմին եւ Եարմուտի (Է. Ս. Ը. Ս. Հալէպ) միջեւ:

Միջմասնաձիւղային մրցումները միշտ ալ եղած են հետաքրքրական եւ անցած են Է. Ս. Ը. Ս. Լիբանանի յատուկ միջոցաւ մէջ: Նման մրցումները աւանդութիւն դարձած են եւ կը վերականգնեն Նաւասարդեան խաղերու յիշատակը: Յիշեցնենք, որ երկու կողմերը իրարու անծանօթ չեն: Անցեալ Ս. Զատիկեան առթիւ, երկու կողմերը իրարու դէմ մրցեցան Հալէպի մէջ եւ հաւասարութեամբ իրարմէ:

2002-ի ՄՈՆՏԻԱԼԸ՝ ԾԱՓՈՆԻ ԵՒ ՀԱՐԱԻ. ԲՈՐԷԱՅԻ ՄԵԶ

ՖիֆԱ-ն երկէ յայտարարեց, թէ արտօնութիւն կու տայ Ճափոնի եւ Հարաւային Քորէայի, որպէսզի միասնաբար հիւրընկալեն 2002-ի Մոնտիալը:

Այս որոշումը պիտի գործադրուի 21-րդ դարու առաջին Մոնտիալին եւ պիտի ըլլայ պարտութիւն մը ՖիֆԱ-ի նախագահ Ժոստ Լաւրանիին, որ համաձայն չէր այս նետարանքին:

ՃՈՒԹՊՈՂԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՍՊԱՍՈՒԱԾ ՄՐՅՈՒՄԸ

Հ.Ս.Ը.Ս. ՊԷՅՐՈՒԹ ԸՆԳԳԷՍ ԵԱՐՄՈՒԹԻ (Հ.Ս.Ը.Ս. ՀԱԼԷՊ)

Տեղի կ'ունենայ Կիրակի, 2 Յունիս 1996, կէսօրէ ետք ժամը 2.30-ին, Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Ս.Ը.Ս.ի փառատոնի առաջ:

Մուտքը ազատ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԸ ԱՍԻՈՅ ԼԱԲԱԳՈՅՆԸ ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒՆ

Երէկ, Ասիոյ ֆուլթայմի ֆետերասիոնը Լիբանանի ազգային խումբը հռչակեց Մայիսի յաւաքոյնը, նկատի առնելով այս ամսուան թիւրքմենիստանի դէմ 2 մրցումները (3-1 եւ 1-0):

Լիբանանի ազգային խումբին այս յաջողութիւնը կը յաջորդէ Է. Ս. Ը. Ս. Լիբանանի Վարդան Զաքարեանի յաւաքոյն մարտիկի ընտրութեան Յունիս արամուան, փաստելով, որ 1996-ը իրանացիներուն տարին պիտի ըլլայ:

Միւս կողմէ, երէկ վարչապետ Ռաֆիք Հարիրի իր ընկալանքին մէջ ընդունեց Լիբանանի ֆուլթայմի ֆետերասիոնը եւ ողջունեց արձանագրուած արդիւնքները:


ԼՈՒԻՍ ԷՆՐԻՔԷ ՄԻԱՅԱԻ «ՊԵՐՍԱ»-Ի

Ռեալ Մատրիտի միջազգային միջնապահ Լուիս Էնրիքէ Մարթինէս հինգ տարուան համար պայմանագրուած մը ստորագրեց Պարսեթոնայի հետ:

28 տարեկան, էնրիքէ կրնայ մրցիլ ամէն դիրքի վրայ, բացի... բերդապահի դիրքէն:

«Պարսա» միշտ ալ հետաքրքրուած էր այս մարտիկով:

ԶԱՆԿ - ՃՈՒ



«ԿԱՄՔ» ԱԿՈՒՄԲԻՆ ԶԵՌՔ ԶԳԱԾ ՅԱԶՈՂՈՒԹԻԻՆԵՐԸ

Լիբանանի Քանկ-Ճուրի ախոյեանութեան մրցումներուն, անցեալ շաբաթավերջին «Կամք» ակումբը բազմաթիւ յաջողութիւններ ձեռք բացեց:

300 մարտիկներ, որոնք կրնան յաջանալ յիշատակելու մասնակցեցան այս մրցումներուն: «Կամք» ակումբը իր մասնակցեցան քսան մարտիկներ եւ խումբը խլեց 1 ոսկի (երեք)՝ Քիւնտա, չորս՝ Թաօլու եւ երկու՝ Սանտա, 2 արծաթ (մէկ՝ Թաօլու եւ մէկ՝ Սանտա) եւ 3 պրոնզ (մէկ՝ Թաօլու եւ հինգ՝ Սանտա):

«Կամք»-ի փորձերը կը կատարուին Զալքայի Սուրբ խաչ եկեղեցւոյ սրահին մէջ, մասթրը Ռոմէ Գունտաֆեանի ցուցմունքներով:

Ստորեւ՝ մրցումներուն թեքնիք արդիւնքները՝

— ԿՐՏՍԵՐ Բիւտալ աւանդական ազատ մարտիկ իշխուք՝ 56 - 60, 15 տարեկան Սեւակ Ազնիկեան ոսկի մետալ:

Կշիւք՝ 60 - 65, 15 տարեկան Շանթ Թորոյեան ոսկի մետալ:

Կշիւք՝ 70 - 75, 15 տարեկան Կարօ Հալաճեան ոսկի մետալ:



Թաօլուի ախոյեան՝ Ներսէս Բիւլիքեան:

մետալ:

— ԿՐՏՍԵՐ Թաօլու Բանկ - Յոնի պար 15 տարեկաններ վար՝ Ներսէս Քիւլիքեան ոսկի մետալ:

15 տարեկաններ վար՝ Գէորգ Սալպեան ոսկի մետալ:

13 տարեկաններ վար՝ Ալեքսի Վելիքեան ոսկի մետալ:

— ԿՐՏՍԵՐ - ԵՐԷՅ Սանտա ազատ մարտիկ իշխուք՝ 56 - 60, 15 տարեկան Սեւակ Ազնիկեան ոսկի մետալ:

Կշիւք՝ 75-80, 16-17 տարեկան Նարեկ Արաճամեան ոսկի մետալ:

Կշիւք՝ 75-80, 16-17 տարեկան Կարօ խաչերեան պրոնզ մետալ:

28 ՄԱՅԻՍԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ...

զր կը ցնդի՝ հայ մարդուն այդ ընկալան իրաւունքը ստորագրուած չունի Կառնապիլ Կառնապիլներուն: Ահա աստեղ եւ Կառնապիլները մեր դժգոհութեան, մեր ընդդիմութեան, աստեղ եւ Կառնապիլները մեր քննադատութեան:

Կրթութիւն, որ այսօր եօթնամեակեան թուականներուն նախորդող շրջանին նմանութեամբ, փորձ կ'ըլլայ ստեղծել Հայաստանի իշխանութիւններուն թեր եւ դէմ հատուածներուն հակադրութիւններ Սփիւռքի մէջ: Ինչպէս մօտաւոր անցեալին, այսօր եւս Հայաստանի իշխանութիւններն են դարձնել սփիւռքահայութեան կեանքը հակակշիւթ փորձող նախաձեռնութիւններուն: Երէկ համայնապարտութեան հաշուին էր, իսկ այսօր բեւեռացումը կը փորձուի իրագործել պատշաճութիւններով պահանջներուն եւ իսկապակեան յարաբերութիւններով բացատրուող ազգային մտածողութեան հաշուին:

Մերժելի են այս փորձերը:

Սփիւռքահայութեան մէջ բաժանումները եւ ազգային գետնի վրայ պայքարները չեն լրիւ ազգային գաղափարաբանութեան տարբեր մեկնաբանութիւններին: Հայկական Յեղափոխութեան ճանաչման խնդիրը, Հայ Դատը իր այլազան դրսեւորումներով, նոր սերունդներուն հայեցի՝ դատարարականութիւն ջամբելու հրամայականներ, հայ մշակոյթը պահպանելու եւ զարգացնելու հարձակոյթները, Հայաստանեայց Եկեղեցին պաշտպանելու անհրաժեշտութիւնը միշտ ալ գիտակից սփիւռքահայութեան ուղղութեան կեդրոնը գտնուած են:

Սփիւռքները մէկ են, տարբեր կը թուին սակայն գաղափարները կիրարկելու միջոցները: Կրթեք՝ «Կրթութիւն», որովհետեւ այդ մարզին մէջ եւս համախոհութիւնը անկարելի չէ՝ փորձառութիւնը ցուց կու տայ, որ ազգային կեանքին բոլոր ընդհանրութեան մէջ ալ յաջողած ենք համատեղ ու միասնական գործունէութիւն ծաւալել:

Կր մնայ սակայն ազգային ղեկավարութեան հարցը: Ո՞վ պիտի հակադէմ սփիւռքահայութեան ազգային ու քաղաքական կեանքը, ո՞վ է տէրը Սփիւռքին:

Մենք պիտի ուզէինք, որ Հայաստանը ըլլար տէրը Սփիւռքին: Կրթեք ասիական անվերապահօրէն, որովհետեւ ընկալան իրողութիւն չէ՝ միթէ, որ սփիւռքահայ գաղութները իրենց կենսունակութեամբ, հնարաւորութիւններով, ազդեցութեամբ պարտին դառնալ ազգուն դեմաւորներ հայութեան Դատին, հայութեան ընդհանրական նպատակներու իրականացման ու, առաջին հերթին, Հայաստանի պետականութեան պաշտպանութեան, ամրացման, Արցախեան պահպանութեան յաջողութեան, իրրեւ կուտանք մեր պայմանական նպատակներուն իրականացման:

Ահա Հայաստանին է, որ բաժանման որոմը կը ցանկ, մեր հասարակաց ու ազգովին ղեկաւորած նպատակները յարաբերական կը դարձնէ, քաղաքական առօրեական, մարտավարական ընտրանքներուն ազգային նպատակներու շարքի կը հազցնէ ու Սփիւռքին ալ կը փորձէ պարտադրել այդ մասնակին, ժամանակաւորը: Հայաստանը այս ձեւով կը փորձէ տիրութիւն ընել Սփիւռքին:

Սակայն ի՞նչ է Հայաստանը: Երէկի համայնապարտ Հայաստանը, որուն երկիւր ծառայողները այսօր ամենաբաւարար զանազանները կը արժանանան «ազատ - իսկապակեան» ու «ազատական» Հայաստանը,



Սանտայի ախոյեան Սեւակ Ազնիկեան (աջից), որ 48 քկ. է, մասնակցեցաւ 56-60 քկ. կշիռի մրցումներուն եւ գրաւեց առաջին դիրքը:



Սանտայի 75-80 քկ. կշիռի Լիբանանի ախոյեան՝ Նարեկ Արաճամեան:

— ՄԵՏԵՐ 18 եւ վեր Սանտա Կշիւք՝ 56-60, Փաթրիք Ապաճեան արծաթ: 56-60, Պօղոս Աթոքեան պրոնզ: 65-70, Նշան Սվաճեան պրոնզ: 75-80, Գօգօ Սվաճեան պրոնզ: 70-75, Պիլայ Ամհազ պրոնզ:

— ՄԵՏԵՐ Թաօլու Վաչէ Ապաճեան չունի չուան ոսկի:

Բաֆֆի Սեւեան նանչուան ոսկի: Պօղոս Աթոքեան ծր չին ոսկի:

ԱՐԴԵՐՆ

պրն. Շահինեանը ամէն բան էր, որ կապ ունէր Է. Ս. Ը. Ս. Լիբանանի հետ: Տեսեր եմ իր նկարները իրրեւ ֆուլթայմիստ, ղեկավար, ախոյեան: Նոնոն անանկ լաները չունէր, չեմ ալ յիշեր, թէ սկսուտ եղած էր, բայց միշտ կը յիշեմ գինք իրրեւ ինչու են ժպտողէմ ընկեր մը, քաղցր եւ բարեկամական մօտեցումով: Օր մը թիւր պարտէր եկեր էին մեր մոնները ու չեմ գիտեր ինչո՞ւ, մի քանի շնորհքով տղաք կ'ուզէին, ճակերտով թիւր մը համար էր, ինչ էր: Երբեք չգիտեցայ: Բայց կը յիշեմ, թէ պարոն տնօրէնը թէ օրիորդ Անահիտը, մեր դասարանէն Նոնոն ընտրեցին: Հիմա ա՛յ ուշ է Նոնոնին հարցնելու համար: Նոնոն մեռաւ: Այո, ընկերս, անուշիկ ընկերս, ան՝ որ յիտունհինգ տարիքը հասաւ, բայց միշտ Նոնոնի մնաց: Հայրը մարզիկ էր, տիւիսիփիլի աշխարհէր ունեցած ըլլար, մեծ եւ ծանօթ ղեկարար ունէր: Տղան ինչո՞ւ լաղապէս եղաւ, չեմ գիտեր:

Տարիներ չէինք տեսներ գիրար, ու երբ միասին կ'ըլլէինք, Նոնոն նոյնն էր միշտ: Ձիւ Հայրը կը կոչէր՝ «Գագնեմով, որ այդ հին անուան մէջն էր փնտրուէր մանկութեան օրերը, ընկերները, բարեկամները մոլութիւնը, հեռու պաշտօնի եւ հանգամանքի պարտադրանքներէն: Նոնոն, Հայկուն, Լիպուն, Արուն: Արուն ալ մեռաւ կարծեմ: Վերջերս «Ազգական» մէջ մահահաղ մտնեայ, կըրուէր մահը Արարհամ Տէր Պետրոսեանի (ծնեայ Ձահ-ի, 1942): Կրնայ ըլլալ, կրնայ չըլլալ: Մօտիկ դասեր կըրն էր Արարհամ Տէր Պետրոսեան, «ընտան» Տիպարոս: Միասին դարձաւ:

(Գլխողոր գիտէ, մի պիս չկայ):

ու հիմա՞ պա՛յ, պա՛յ Նոնոն:

Աստուած ալ քեզ ալդպէս կը ճանչնայ, սիրելի Նոնոն: Թերեւս անձնագրութեւ մէջ Ներսէս եւ եղած կամ Ներսէս: Բայց մենք Նոնոնին գաւ ուրիշ անուանով չէինք ճանչցած քեզ եւ չէինք ալ ուզեր:

Ու հիմա կը խոստանամ քեզի, երբ Փարիզ գամ, պտղունց մը խուսկ պիտի դնեմ շիրմիդ վրայ եւ ըսեմ:

Նոնոն, ինչպէ՞ս ես:

ԸՆԿ. ԲԻԻԶԱՆԴ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Գնա՛ ընկեր, խիղճդ հանդիստ իրաւունքը մեզ, գնա՛ միացիր Ռուբինի փաղանգի հերոսներուն, մերօրեայ ազատամարտիկներուն, Հայաստանի ու Արցախի նորանոր մարտիկներուն եւ անոնց հետ միասին թող հողիդ թեւերը առած սաւառնի ծովի ծով, Մեծ Հայքին Փոքր Հայք ու Մասիսէն Արարհամ, Հայաստան դրախտավայր երկրի վրայ:

Թէ եւս հողիդ սպիները դեռ չեն չորցած ու այդպէս կը իրաւունք մեզմէ, բայց մենք գիտենք, որ գոհ եւս «ՈՅ» չունեցած ըլլա՛ւք համար: «ԵՍ» չունենալուդ համար, այլ «ՄԵՆԲ»-ը՝ դաշնակցական հաւաքական «ՄԵՆԲ»-ը ունեցած ըլլալուդ ու գայն մինչեւ վերջին շունչ պահած ըլլալուդ համար, մինչեւ մահ ու մահէն անդին:

Վարձի կատար ընկ. Բիւզանդ, հողի թեւեւ գալ վրայ:

ԿԱՐԵԻՈՐ ԱՁԴ

Երիկամունքի հիւանդութեան տառապող մը վիրաբուժութեան կը կարծուի: Արեան տե-
սակ՝ AB+: Կը ինդրուի հեռաձայնել 443205
թիւին, ժամը 19.00էն 21.00:

Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ԿՈՅՍԵՐՈՒ ՏՕՆԸ

ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Այսու կը յայտարարենք՝ որ յառաջիկայ Կիրակի,
2 Յունիս 1996ին, Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ԿՈՅՍԵՐՈՒ ՏՕ-
ՆԻՆ առիթով, հանդիսանոր Սուրբ Եւ Աման Պատա-
րագ պիտի մատուցուի Եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի հարգէ՝

ԳԵՂՊ՝ Տ. ՄԻԻԻՈՆ Ծ. ՎՐԻ. Ա.ՋՆԻԿԵԱՆ
(Հոգևոր Հովիւ Յիզկունյի)

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7.30ին
Սկիզբ Պատարագի՝ ժամը 9.30ին
Բարոգ՝ ժամը 10.30ին
Կը կրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԷՅՐՈՒԹԱԲՆԱԿ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Այսու կու գանք Մուսա Լեռան հայրենակիցնե-
րուն եւ բարեկամներուն յայտնելու, որ ՄՈՒՍԱ
ԼԵՐԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԾԻՆՈՒԹԵԱՆ ԿԵԻՐՈՆԱ-
ԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ կը շարունակէ իր աշխատանքնե-
րը. իր ամբողջացած վիճակին մէջ տեսնելու հա-
մար Յուշարձանի կառուցումը: Այս աշխատանքի
համբուն վրայ Կեդրոնական Մարմինը Պէյրութի
մէջ յառաջ տանելու համար աշխատանքը՝ աշխ-
գան երեսներու վրայ, յառաջացուցած է ԼԻԱԶՍԻ
ՅԱՆՋՆԱԽՈՒՐԴ մը:

Այս Յանձնախումբը ամիսներէ ի վեր աշխա-
տանքի մէջ է կազմակերպելու համար Պէյրութի
մեր հայրենակիցներուն մասնակցութիւնը Յուշար-
ձանի ամբողջացման եւ բարեգարգման: Յանձնա-
խումբը սկսած է արդէն այցելել մեր հայրենակից-
ներուն եւ բարեկամներուն տունները՝ բացատրելով

անոնց աշխատանքի ընթացքը եւ կատարելով հան-
գանակութիւն:

Լիալուս ենք, որ մեր հայրենակիցներն ու բա-
րեկամները լայն հասկացողութիւն պիտի ցուցա-
բերեն այս հանգանակութեան, որպէսզի յաջողու-
թեամբ պսակուի Հայ Ժողովուրդի գոյատեւման եւ
նոր սերունդի ներշնչման աղբիւրին՝ Յուշարձա-
նին կառուցումը:

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԿԵԻՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ՊԷՅՐՈՒԹԻ ԼԻԱԶՍԻ
ՅԱՆՋՆԱԽՈՒՐԴ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԵՒ ՄԱՅՐ ԳՐԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կիրակի, 2 Յունիս 1996, շրջանի բարերարնե-
րէն Վահէ Ետալեանի մահուան Գ. տարելիցին եւ
իր ծնողաց՝ Սկրտիչի ու Լիտիայի հոգիներուն
համար, իսկ մեր եկեղեցւոյ 60ամեակի առիթով,
անոր մայր դրան հանդէպ կատարուած հիմնա-
կան փոփոխութեանց պատճառով, հոգեհան-
գըստեան հանդիսատար արարողութիւն եւ մայր
նոր դրան օրհնութիւն պիտի կատարուի Հայաշէ-
նի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, 2 Յունիսին, Հայաստանի Ան-
կախութեան ստեղծման 78րդ տարեդարձին
առիթով, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, Ս.
Պատարագէն անմիջապէս ետք, ընդ նախա-
գահութեամբ Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրա-
պետ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Հոգեհանգստեան յատուկ պաշտօն պի-
տի կատարուի Հայաստանի անկախութեան
համար իրենց կեանքը պոհաբերած հայոր-
դիներուն համար, որոնք նահատակուեցան
մասնաւորապէս Մարդարապատի ձակաւա-
մարտին, 1918 Մայիսին:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ Հայ
ժողովուրդը՝ իր յարգանքը արժանաւայել
կերպով ընծայելու քաջամարտիկ հայ հերոս-
ներուն:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԿԱՆԱՆՅ ՎԱՐՍԱՅԱՐԴԱՐ GEORGIG BALIAN

(HAUTE COIFFURE FRANCAISE)

Հասցէ.- Ջալքա, Ս. Խաչ եկեղեցւոյ կից,
GRAND PARK II, հեռ. 418638 եւ 403414:

ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ

(ԱՆԱՐԱՏ ՅՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ
Յանար Հեռ. 891099 - 891068)

Տնօրէնութիւնս բաց կը լայտարարէ 1996-
1997 դպրոցական տարեշրջանի արձանագ-
րութիւնները 3 Յունիս 1996էն սկսեալ, ամէն
օր առաւօտեան ժամը 8էն 14, բացի Շաբաթ
եւ Կիրակի օրերէն, մինչեւ 19 Յունիս 1996:

Դիւրացնելու համար վերամուտի գրա-
սենեակի աշխատանքները՝ արձանագրու-
թիւնը պարտադիր է ներկայ աշակերտու-
թեան:

Նորէկ աշակերտները պարտին իրենց
հետ բերել ինքնութեան թուղթի լուսապատ-
ճէն կամ «Իրաւժ քայտ», մկրտութեան վա-
ւերագիր, պատուաստներու եւ առողջ վի-
ճակի վկայագիր եւ 4 լուսանկար:

Մանկապարտէպ կ'ընդունուին երեք տա-
րեկանէն վար փոքրիկները, պայմանաւ, որ
կարողութիւնը ունենան հասկնալու եւ
հասկցունելու:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծա-
նուցումներ հրատարակել փափաքողներէն կը
խնդրուի ծանուցումին բնագիրը *ընթեռնի գիրով*
(հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար
պաշտօնական թուղթի վրայ, եւ հաստատուած) ներ-
կայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեա-
լը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԲԻԻԶԱՆԴ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան քառասունցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Մարաշի Սրբոց Զա-
ռասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պա-
տարագի:

ԲԻԻԶԱՆԴ ԱՐԸՃԵԱՆԻ եւ ԱՐԾԱՆՈՅ ԱՐԸՃԵԱ-
ՆԻ մահուան Գ. տարելիցին առիթով, հոգեհանգըստ-
եան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 2 Յունիս

1996, Աթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տա-
ճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀԱԼԷՊ

ՀԱԼԷՊ

ՆՈՒԱՐԴ ՊՕՂԻԿԵԱՆԻ մահուան քառասունցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Հալէպի Ս. Աստուածածին
եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԶԱՐԵՀ ԳՈՃԱՕՂԱՆԵԱՆԻ մահուան Ա. տարելի-
ցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կա-
տարուի Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Միսի Ս. Սարգիս
եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՄԱՐԻԶԱ ԶՈՒԼՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Մարաշի Սրբոց Զա-
ռասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պա-
տարագի:

ԺԱՆ ԿՐԵԿՈՐԱՐ ՓԱՆՈՍԵԱՆԻ (ԺԷՓԱ) մահուան
քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի Կիրակի, 2 Յունիս 1996, Ջալքայի
Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան
ժամը 10ին:

ՅՈՎԱԾ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Միս թաղի Ս. Սարգիս
եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԳՈՀԱՐ ՏԱՐԱԳՃԵԱՆԻ մահուան քառասունցին առի-
թով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կի-
րակի, 2 Յունիս 1996, Նոր Միսի Ս. Սարգիս եկեղեցւոյ
մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 2 Յունիս 1996, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ
մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՆՈՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Մարաշի Ս. Զատ. Ման-
կանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՊՕՐՈՍ ՏԱԶԵՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Մարաշի Սրբոց Զա-
ռասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պա-
տարագի:

ԱՐԱՄ ԶԻԼԻՍԵԱՆԻ մահուան քառասունցին առի-
թով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 2 Յունիս 1996, Նոր Միսի Ս. Սարգիս եկե-
ղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀՐԱՆԴ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան քառասունցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատար-
ւի Կիրակի, 2 Յունիս 1996, Հայ Կաթողիկէ Ս. Եղիս
եկեղեցւոյ մէջ, ժամը 11ին:

ՎԱՐԴԵՍ ԵՒ ՀՐԱԶ ՏԱՌՈՒԿԵԱՆԵՐՈՒ մահուան
Ը. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի Կիրակի, 2 Յունիս 1996, Հայաշէնի
Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս.
Պատարագի:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ (ՏԱՄԱՆՈՎ)

● Պուրճ Համուտի մէջ:
Հեռ. 267130, Երեկոյեան
ժամը 7էն 9:

ԾԱԽՈՒ Է

● Առեւտրական կեդրոն
մը, Պուրճ Համուտի մէջ,
Արաքս թաղ, 5 յարկանի:
Հեռ. 261473:

Կ՝ՈՒԶՈՒԻ

● Առամնաբուժական
Polyclinique մը կարիքն ու-
նի օգնական օրիորդի մը,
նախընտրաբար Տորայի շըր-
ջանէ: Հետաքրքրողները
կրնան հետաձայնել 445746
թիւին, կէսօրէ ետք ժամը
3էն սկսեալ:

ԾԱԽՈՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ

● COLF GTI, 1987ի մո-
տէլ, 16 V., ճերմակ, գին՝
6.000 տոլար: Դիմել՝ հեռ.
03-777925:

Կ՝ՈՒԶՈՒԻ

● Շաքարեղէնի եւ խմիչ-
քի մեծ ընկերութիւն մը
պէտք ունի աշխոյժ վաճա-
ռորդ ներկայացուցիչի մը,
որ ստանձնէ Պուրճ Համու-
տի շրջանը: Կը խնդրուի կապ
պահել արք. Քրաթիի, հեռ.
485380/1/2/3/4/5 թիւերուն:

ՎԱՐՁՈՒ ԸԱՊԻՆԵՐ

«Թապարժա Պիշ-ի մէջ,
Իւրաքանչիւրը 3.50 քառ.
մետր տարածութեամբ,
փարքիցկով»
Հեռ. 884914 եւ 870210,
պր. Փօլին:

ՇՆՈՐՀԱԿԱՆԷ

Տէր եւ տիկին Գէորգ
Սանթրոնեան եւ տէր եւ տի-
կին Համբիկ Սանթրոնեան
շնորհակալութիւն կը յայտ-
նեն ըրող անոնց, որոնք ան-
ձամբ, ծաղկեպսակով եւ
նուիրատուութեամբ մասնա-
կից եղան հիւրենց մօր՝ ՍԵՍԻԼ
ՍԱՆԹՐՈՒՐԵԱՆԻ մահուան
սուգին:

HAWIE

(Նախապէս՝
Տնոր Շուէրի մէջ)

- Պաղպաղակ
- Աղցան
- Սանտուիչ
- Համպըրկըր

ՄԱՆԱԳԵՏԻ
ՊԱՏՈՍՈՒԹԱՄԲ՝
ԽՈՐՀԱՆՈՒՆՆԵՐՈՒ
ՓԻՅՅԱ ԵՒ ՕՐՈՒԱՆ
ՃԱՇ:

● Լիբանանեան եւ
եւրոպական խոհանոց

ԶՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
ԲՆԱԿԱՐԱՆԵՐՈՒ
ԵՒ ԳՐԱՆԵՆԱԿՆԵՐՈՒ

● Տորա, կ. ամ. ժամը 9.30էն
մինչեւ կ. Ե. ժամը 6.30:
Հեռ. 871259 եւ 871342
● Էշրեֆիէ, կ. ամ. ժամը
9.30էն մինչեւ
երեկոյեան ժամը 10.30:
Հեռ. 202318 եւ 332425:

● Ճաշարանը փակ է
Կիրակի օրերը:

ՀԻՆԱՂԱՆՈՅ ՍՈՒՏԵՐ ՆԻՒ- ԹԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ ԶԵՐ- ԲԱԶՍԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵՐ՝

ԱՏՅԻԼԻ մօպ

- ՆՈՒԱԶԱԳՈՅՆ սակերով
- ԱՌԱԵԼԱԳՈՅՆ խնամք
- Վճարման դիւրութիւններ

Հասցէ.- Ազգային Խոր-
հորդի շէնք, ԱՏՅԻԼԻ կից,
Հեռ. 263324

ԻՆՁ ԿՐՈՆԵ ԱՍՏՂԵՐԸ

☆ խՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Երէ ձեր շուրջ գտնուող անձերը չհետեւին ձեր կար-
ծիքներուն կամ նրախանգին, մի՛ ջղայեանաւ, որովհետեւ
ձեր կեցումը կը կրնայ վիճել ստեղծել անվաճառ կարգի-
րու համար:

☆ ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)

Անդամադրելի՝ ցանկութիւն եւ բաղձմէն պիտի ունե-
ցաւ աւարտելու գործ մը, որ ձեր սրտին շատ կը խօսի:
Որեմէն գործի անցելէ շուտով:

☆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)

Շատ հանելի շարաքաղիք մը կրնայ ունենալ, երէ մէկ
կողմ դնէ ձեր անպարկեշտ յատուկ խնդիրները: Լաւ է, որ
ձեր բնականութիւնը պայտաւ մը կատարէ:

☆ ՆԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յունիս)

Ձեր անուշադրութիւնը կրնայ ձախող ապրում մը
պատճառել ինքնաշարժ վարելու կամ գործի ընթացքին:
Պարտաւ սեղաններէն հեռու կեցել, որպէսզի ձեր շատա-
կերութիւնը պատճառ չըլլայ ստամոքսի կամ լեզուի բոր-
բոխ մի:

☆ ԱՌԻԻԾ (24 Յունիսին 23 Օգոստոս)

Զգացական խնդիր մը կրնայ բուժաւորութիւնը, երէ շա-
րունակ մնալ բուժակալի ձեր դիմելի վրայ ու բոլոր շատի,
որ ձեր դիմաց գտնուող աղ արտայայտուի կամ լուսաւ-
նութիւն ապ: Զգոյշ եղէ եւ յարգալիր:

☆ ԿՈՅԱ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Պատրաստ է քննադատելու բոլոր ու մանաւանդ կ'ու-
զէ՛ր ցատկ տալ ձեր բնականութիւնը անկախութիւն: Ի՞նչ բանի
պիտի ծառայէ, ձեր այս կեցումը. Բիշ մը յօտարական ու
հանդուրժող եղէ:

☆ ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Ձեր առողջութիւնը ակարացած է, ու պէտք ունի՛ք հանգ-
չելու: Այսօր անօգուտ գնումներու համար պրոպէ՛ր մի՛ ծախ-
սէ՛ք, հանգի՛ք պատճառելու համար... ցուցադրուելու ցան-
կութիւն:

☆ ԿԿՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Չափաւորեցէ՛ք ձեր ծախսերը եւ յաւելաւ պրոպէ՛ր չը-
ռայէ՛ք, ինչ որ ձեր կարողութիւնէն վեր է: «Ձեր ռաբիւրը
երկարեցէ՛ք ձեր վերմակին համեմատ», կ'ըսէ առա՛մը:

☆ ԱՆԵՂՆԱԻՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Ձեր ուժակները իրենց անկում պիտի կրէ այսօր. հանգ-
չեցէ՛ք եւ կենսակիր առէ՛ք, որպէսզի վերադառնէ՛ք ձեր կայ-
տաւ վիճակը:

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՐ ՄՈՒՍԱՆ

ԴԱՄԱՍԿՈՍ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսա Ուրբաթ օր ամակնկալ տեսակցություն մը ունեցաւ Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի հետ՝ արժեւորելու համար շրջանի կացութիւնը՝ Իսրայէլի ընտրութիւններուն արդիւնքներուն լոյսին տակ։

Նախագահական բանբեր ժըյորան Քուրիէ յայտարարեց, որ տեսակցութեան հերկալ գտնուած է նաեւ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ։ Տեսակցութիւնը տեղի ունեցաւ նախագահին Լաթաքիոյ պալատին մէջ։

Իսրայէլի ընտրութիւններուն արմատական Պե-նիամիին Նեթանիաուի արձանագրած լառաջողմուն-թիւնը իրադարձար փերէսի դեմ անսպասելի կացութեան մը դիմաց դրաւ լատկապէս արաբները, որոնք տակաւին ամբողջական իսրայէլական չեն հաստատած Իսրայէլի հետ։ Նեթանիաուի յայտարարած է, որ պիտի ընդարձակէ հրեական բնակեցման վայրերը եւ Կոլանը պիտի չվերադարձնէ Սու-րիոյ։ Ան նաեւ Իսրայէլի մայրաքաղաքը կը նկատէ քրիստոնէական, որ պիտի մնայ հրեական պետութեան անբաժանելի մէկ մասը։ Նեթանիաուի այս յայտարարութիւնը պատերազմի հռչակում կը նկատ-ւի արաբներուն համար։

Մուսայի Սուրիա այցելութիւնը կը յաջորդէր հեռաձայնային հաղորդակցութեան մը՝ նախագահ-ներ Ասատի եւ Հիւսնի Մուպարաբի միջեւ։ Ասատի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ստացած էր նաեւ Լիբանանի նախագահ Էլիաս Հըրաուիէն։ Եգիպտոսի մօտ Սուրիոյ դեսպանը, իր կարգին, դիտել տուաւ, որ Նեթանիաուի ամբողջ շրջանը պատերազմական վիճակի մը մէջ պիտի գնէ, եթէ գործադրէ ընտրապաշարի իր բոլոր խոստումներն ու յայտարարութիւնները։

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱԹԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԶԵՆ

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊՐԻԻՔՍԷԼ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Եւրոպական խորհուրդը Ուրբաթ օր ուսումնասիրեց տեղեկագիր մը՝ բրիտանական կաթի մասին, եւ համաձայն գտնուեցաւ, որ մանուկներու սննդեղէն ծառայող խնդրոյ առարկայ կաթի տեսակները վտանգաւոր չեն եւ կրնան օգտա-գործուիլ։

Եւրոպական խորհուրդի պաշտօնատարները այս եզ-րակացութեան հասան, քննելէ ետք բրիտանական տե-ղեկագիրը, որ հիմնուած էր փորձարկումներու վրայ եւ որոնք ցոյց կու տան, որ քիմիական որոշ նիւթ մը պա-րունակող կաթի ինք տեսակները վտանգաւոր ոչինչ ունին։

ԽՐՈՒԱԹ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՃՐԱԳՈՐԾ ՄԸ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ

ԼԱ ՀԷՑ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Խրուաթ մը, որ պոսնիացի սերպերուն բանակին մէջ ծառայած էր, Ուրբաթ օր խոստովանեցաւ, որ մեղսակցած է իսլամներու հաւա-քական սպանդներու՝ Սրբաբնիցայի անկումէն ետք (Յուլիս 1995)։

24 տարեկան Տրագին Հրտեմովին, որ ՄԱԿի հաստա-տած Եւրոպայի մէջ պատերազմի ոճիրներու ատեանին կողմէ կոտորածներու զոհերէն էր, յայտարարեց, որ յանցաւոր է հարիւրաւոր իսլամներու սպանութեան մեղսակցած ըլլալուն համար։

ԸՆՏՐԱՊԱՅԵԱՐԻ ԾԻՐԻՆ ՍԷՋ

ԵԼՑԻՆ «ԿԵԱՆՔԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԶԵՒ ՄԸ» ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՌՈՒՍԵՐՈՒՆ

ՓԵՐՄ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Նախագահ Պորիս Ելցին, որ վերընտրուելու համար ար-չաւ կը տանի, Ուրբաթ օր խոստացաւ «Կեանքի ընա-կանոն ձեւ մը» տալ ուսու-թուն՝ հինգ տարի ցաւէ ետք։

Յճ տարեկան Ելցին, որ ամէն ճիշդ ի գործ կը դնէ ապահովելու համար յա-ռաջիկայ ամսուան ընտ-րութիւնները, իր կերպով արմատական քարեկար-գումներու ծրագիր մը քո-

ղագրեծեց Ուրբաթ օր։ Ան 127 կ'ընէ կազմուած ծրա-գիրը՝ ներկայացուց ճան-րութեան՝ կոչ ուղղելով, որ գործադիր կանգնել իրեն եւ ոչ թէ՛ համայնապարհ-րուն։ Ան խոստովանեցաւ, որ անցեալ հինգ տարիներուն սխալներ գործած է։ Ելցին աւելցուց, որ ինք կը գգայ ժողովուրդին ցաւե-րը, բայց եւս այսպէս, անոնք ապաքինման ցաւերն են, որոնք չուտով պիտի մեղ-մանան եւ ապա՝ քննուին։

ՈՒԱԾԻՆԿԹԸՆ ՊԻՏԻ ՕԺԱՆԴԱԿԷ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ

ԱՄՄԱՆ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Միացեալ Նահանգներու սպայակոյտի պետ գործ. Ճոն Շալիքաշվիլի Ուրբաթ օր յայտարարեց, որ Ուաշինկթըն ինքզինքը յանձնառու կը գգայ օգնելու Յորդանանի բանակին արդիականացման։

Զօր. Շալիքաշվիլի Յորդանան հասած էր Հինգշաբ-թի օր։ Ան Ուրբաթ օր տեսակցութիւն ունեցաւ Յորդա-նանի թագաւորին եւ բանակի բարձրաստիճան պատաս-խանատուներուն հետ, քննարկելու համար բանակին կարիքները։ Ան գոհունակութիւն արտայայտեց մշակ-ւած ծրագիրներուն համար։

Մանսօթ է, որ ամերիկեան արդիական օդանաւեր ժամանակաւորապէս Յորդանան հաստատուած են, իսկ Յորդանան յառաջիկայ տարի պիտի ստանայ «Էֆ. 16»-եր։

ԱՂԷՏԱԼԻ ՀՐԴԵՀ

ՄՈՍԿՈՒԱ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Ռուսիոյ ծայրագոյն արեւելքի խաղաղուստ քաղաքին մէջ, Ելեկտրական թե-լեքու խաղաղարձան հետեւանքով, աւելի քան 50 փայտ-եայ տուններ հրդեհաբեկ զարձան Ուրբաթ օր։

Հրդեհը խլած է 4 գոհ։ 1200 հոգի կը մնան անտուն։

ՀԵՏԻՈՏՆ ԿԱՄ ՀԵԾԻԿՈՎ ՇՐՋԱԳԱՅԵԼՈՒ ԿՈՉ

ԼՈՆՏՈՆ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Բրիտանիոյ Էլեկտրո-կան եւ շրջանային կառավարութիւնները ժողովուրդին կոչ ուղղեցին, որ երկիրը հեղաձախ չընեն իրենց ինքնաշարժներով։

Ժողովուրդին կոչ ուղղուեցաւ, որ լառաջիկայ ամիս, հետխոսել կամ հեծիկով գործի երթան։

Վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ առաւե-լագոյն ինքնաշարժ կը գործածեն 2 միլիոնոց համբո-ղութեանց կամ իրենց զաւակները դպրոց տանելու հա-մար։

5 Յունիսը յայտարարուած է «հեծիկով գործի եր-թալու օր», իսկ շաբաթը հռչակուած է «քաղելով դպրոց երթալու շրջան»։

Վերջին 2 շաբաթներուն, ինքնաշարժներու խնդ-րումի հետեւանքով, 2 ոմիւրներ արձանագրուած են Լոնտոնի շրջանին մէջ։

ՕԹԱՆ ԿԸ ՃՆՇԷ ՅՈՒՆԱՍԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՒՈՅ ԿՐԱՅ

ՊՐԻԻՔՍԷԼ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Յունաստանի եւ Թուր-քիոյ միջեւ գինեալ լախումի մը հաւանականութեամբ մտահոգ ՕԹԱՆ կը ճնշէ երկու երկիրներուն վրայ, որ-պէսզի դրութիւն մը հաստատեն, կանխարգիւծելու հա-մար որեւէ լախում։

ՕԹԱՆ ինչ հանուր քարտուղար խաւիչ Մոյանա, որ Անգարա այցելած էր անցեալ շաբաթ, դիտել տուած էր, որ պատրաստ է օժանդակելու, որպէսզի երկու դրացի-ները բարեկամեն իրենց կապերը։ ՕԹԱՆ կ'ուզէ, որ Ան-գարա եւ Աթէնք համաձայնին, փոխադարձաբար, դէ-պարա եւ իրարմիջ յանգրուան վրայ եւ հեռա-ձայնի կարմիր գիծ մը հաստատելու երկու մայրաքա-ղաքներուն միջեւ։

Անցեալ Յունուարին, Յունաստան եւ Թուրքիա գրե-թէ գինեալ ճակատումի սեմին հասան Եղէկաւանի մէկ կողմին չուրջ ծագած վէճին պատճառով։ Ուաշինկթըն միջամտեց եւ յաջողեցաւ ժամանակաւոր կերպով մարել լարուածութիւնը։

ՌԻԱՏԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԸ ՊԱՅԹԵՅՈՂՆԵՐԸ ԳԼԽԱՏՈՒԵՑԱՆ

ՏՈՒՊԱՅ, 31 (ՌԵՕԹԸՐ).- Սկստական Արարիա Ուր-բաթ օր յայտարարեց, որ զի յատաժ է չորս սկստացիներ, որոնք ամբաստանուած էին Ռիատի մէջ անցեալ Նոյեմ-բերին տեղի ունեցած պայթումին ետին կանգնելու յան-ցանքով։ Պայթումը եօթը զոհ պատճառած էր։

Մանսօթ է, որ յիշեալ պայթումին թիրախը ամերիկե-ան գինուորական եղբորն էր։ Պայթումը նաեւ 50 վիրաւոր պատճառած էր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ...

Հ.Յ.Դ.Ն անհրաժեշտ միջոցառումներ չի ձեռ-նարկել թոյլ տրուած եւ շարունակուող իսլամում-ները վերացնելու համար։

Աւելին, կասեցման ընթացքում Արտերկրում գործունէութիւնը իրականացնող Հ.Յ.Դ. Բիւրոն իր որոշմամբ 1995 թ. Ապրիլ-Մայիս ամիսներին փոփոխութիւններ է կատարել կազմակերպութեան կառուցուածքում՝ Հ.Յ.Դ. Հայաստանի Կենտրոնա-կան Կոմիտեներէն փոխարէն ստեղծել է 6 նոր Հ.Հ. շրջանային մարմիններ։ 1995 թ. Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին Հ.Յ.Դ. 26րդ Ընդհանուր Ժողովը ընտրել է Բիւրոյի նոր կազմ, որի 9ը ան-գամներէց 7ը դարձեալ Արտերկրի քաղաքացիներ են, միաժամանակ բանաձեւ-յայտարարութիւն է ըն-դունել, որ «Հ.Յ.Դ. Հայաստանի կազմակերպու-թիւնը պիտի ընտրուի օրէնքներէն եւ գործի Հայաստանի Գե-րագոյն Ժողովով եւ նրա կողմէ ընտրուած գերա-գոյն մարմնով»։ Նկատի ունենալով, որ գործու-նէութեան կասեցման ժամանակամիջոցում, ինչպէս նաեւ դատարանի վճռով նշանակուած կասեցման ժամկետի աւարտից յետոյ իր գործունէութիւնը շարունակելու պատշաճ թոյլտուութիւնը չստանա-լու պայմաններում՝ Հ.Յ.Դ. չի ղեկավարուել վե-րոյիշեալ օրէնքներէն եւ ՀՀ-ի Յեղափոխական Կա-ռուցութիւնի կանոնադրի պահանջներով, Հ.Հ. ար-գադարանութեան նախարարութիւնը նախագո-ւշացնում է, որ Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշմամբ ստեղ-ծուած հայաստանեան կառույցներում ընթացող կու-սակցական ժողովները, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. 26րդ Ընդհանուր Ժողովի որոշմամբ նախատեսուած Հա-յաստանի Գերագոյն (կամ՝ վերին) Ժողովի գո-ւմարումը անօրինակ են։

Հ.Հ. ԱՐԴԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԴԵՆ ԻՍԿ ՄՆԱՅԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ 12 ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ

3 ՆԱԶԱՍԵՆԵԱԿ, ՀԻՐԱՍՐԱՀ ԾԱՇԱՍՐԱՀ, ԶՈՅԳ ԲԱՂՆԻԸ, ԶՈՅԳ ՎԵՐԵԼԱԿ ԵՒ ԳԵՂԱՏԵՍԻԼ ԴԻՐԸ...

PARK JDEIDEH (Զոյէն տը Լա Սաժէսի մօտ)

55.000 \$

● ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ. - Ա. ՎՃԱՐՈՒՄ՝ 14.000 \$, 2 ՏԱՐԻ ԱՄՍԱ-ԿԱՆ ՎՃԱՐՈՒՄ՝ 550 \$, ԻՍԿ ՄՆԱՅԵԱԼ ԳՈՒ-ՍԱՐԸ ՎՃԱՐԵԼԻ 15 ՏԱՐՈՒՄԱՆ ԸՆԹԱՑԵԼ։

ARA YEREVANIAN et FILS S.A.R.L.

BEC TOWER, օթոսթրատ Ժէլ - Էլ Տիպ, 10րդ յարկ, Հեռ. 01- 406997, 01- 407023 CEL. 03- 300128

SAYFCO

ՓԱՐԻՉ.- Ֆրանսացի նախկին նախարար եւ սնանկացած գործառնոր Պեռնար Թափի 30 ամիս առկախուած բանտարկու-թեան վճիռ ստացաւ, ինչ-պէս նաեւ անոր արգիւն-ցաւ 10 տարի գործ վարել։

ՓԱՐԻՉ.- Ալճերիոյ մէջ սպաննուած ֆրանսացի եօթը կրօնաւորներուն դիակները, որոնք գտնուած էին Մաւիայի մօտ, երկ մայրաքաղաք Ալճի փո-խադրուեցան։ Յուղարկա-ւորութիւնը տեղի պիտի ու-նենայ վաղը, Ալճի մէջ։

ԺԷՆԵՒ.- ՄԱԿի մարդ-կային իրաւանց գերագոյն պաշտօնատարր խոսէ Ալա-յա Հասսօ, երկէ դատա-պարտեց ֆրանսացի կրօ-նաւորներուն սպանու-թիւնը Ալճերիոյ մէջ եւ իր ցաւակցութիւնները յայտ-նեց ֆրանսայի եւ անոր փո-ղովուրդին։

ԼԱՍ ԱՆՃԵԼԸՍ.- Հո-լիվուդի պատկերասփի-ռի ծառայարարուեստի անդամները Հինգշաբթի օր մեծարարքի հանդիսու-թիւն մը կազմակերպեցին դերասան Պոպ Հոփի (93 տարեկան) յիշատակելով անոր ասպարէզ մուտքին 50ամեակը։

ԱԼԼԱՅԻ.- Տաճիկիս-տանի մէջ ողողումները հինգ ԳՈՀ խլած են, ինչպէս նաեւ նիւթական վնասներ պատճառած իրակարան-ներու։ Շրջանին մէջ սկսած է տարածուիլ Թիֆուս։

ՈՐՄԷՆ ԵՐԵՎԱՆ

● **ԷՍԵՐԱՆՈՎ**

ՎԻԵՆՆԱՌԱԶ

● **ՏԱՊԿՈՒԾ**

ԳԵՏՆԱՆՆԱՌ

● **ԱՂԱՆ**

Speedway

BLANCO CENTER
Հեռ. 585545-268962

ՕՐՈՒՄԵ ՃԱԾԸ

● **ԷՍԵՐԱՆՈՎ**

ՎԻԵՆՆԱՌԱԶ

● **ՏԱՊԿՈՒԾ**

ԳԵՏՆԱՆՆԱՌ

● **ԱՂԱՆ**

Cool It !

With Armstrong air conditioners.

Features

- Air purifying filter.
- Automatic operation mode
- Air flow directional control
- Compressor protection
- 24 hour ON/OFF Programmable timer
- Capacity from 9000 to 24000 BTUS

ARMSTRONG

Wireless remote control

UNITEC EST. MOUCARRI CENTER - DORA - TÉL: 01/586089 - 602878